Հավելված

Հայաստանի Հանրապետության

պաշտպանության նախարարի

2018թ. օգոստոսի 1-ի

N 798-Լ հրամանի

ՇԱՐՔԱՅԻՆ ԵՎ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ

1. Սույն կարգով (այսուհետև՝ Կարգ) կարգավորվում են ՀՀ զինված ուժերում շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների կողմից ծառայության ընթացքում պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացնելու, դիմումը բավարարելու կամ մերժելու, պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքելու և զինվորական պաշտոնի նշանակելու հետ կապված հարաբերությունները:

2. ՀՀ զինված ուժերում ծառայության ընթացքում շարքային կամ սպայական կազմերի պարտադիր զինծառայողների հետ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքելու և պայմանագրային զինվորական ծառայության անցնելու գործընթացը (բացառությամբ Կարգի 3-րդ, 4-րդ 5-րդ և 6-րդ կետերի) կազմակերպվում է հետևյալ կարգով.

1) մինչև պարտադիր զինվորական ծառայության սահմանված ժամկետի ավարտը, բայց ոչ շուտ, քան պարտադիր զինվորական ծառայության առաջին 5 ամիսը լրանալը, շարքային կամ սպայական կազմի պարտադիր զինծառայողը պայմանագրային զինվորական ծառայության անցնելու ցանկություն ունենալու դեպքում զեկուցագիր (ձև 1) է ներկայացնում զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարին (պետին),

2) զեկուցագիրը յոթնօրյա ժամկետում քննարկվում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) ատեստավորման հանձնաժողովի կողմից: Զինծառայողի զեկուցագրում ներկայացված խնդրանքին համապատասխան պաշտոնի նշանակման

վերաբերյալ դրական եզրակացության դեպքում հանձնաժողովը հրամանատարին է ներկայացնում.

ա. զինծառայողի ցանկությամբ զբաղեցրած պաշտոնում պայմանագրային զինվորական ծառայության անցնելու առաջարկ՝ սպայական կազմի պարտադիր զինծառայողի համար,

բ. նույն զորամասում կոնկրետ թափուր զինվորական պաշտոնի նշանակելու վերաբերյալ առաջարկ,

գ. ՀՀ զինված ուժերում համապատասխան պաշտոնում պայմանագրային զինվորական ծառայության անցնելու առաջարկ,

դ. զինծառայողի ցանկությամբ համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացների գործուղելու առաջարկ՝ շարքային կազմի պարտադիր զինծառայողի համար,

3) զորամասի (զինվորական կառավարման մարմնի) ատեստավորման հանձնաժողովի կողմից կարող է կայացվել պայմանագրային զինվորական ծառայության թողնելը ոչ նպատակահարմար գտնելու վերաբերյալ եզրակացություն,

4) զորամասի (զինվորական կառավարման մարմնի) ատեստավորման հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն, ինչպես նաև հրամանատարի (պետի) կողմից դրական որոշում կարող է կայացվել, եթե զինծառայողը ծառայության ընթացքում չի դատապարտվել և չի ենթարկվել «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կամ «զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժի, ինչպես նաև.

ա. Կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի ա. պարբերությամբ նախատեսված դեպքերում՝ ուսումնական փուլի (փուլերի) ամփոփման ժամանակ ցուցաբերել է միայն դրական արդյունքներ,

բ. Կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի բ. և գ. պարբերություններով նախատեսված դեպքերում՝ համապատասխանում է առաջարկվող պաշտոնի անձնագրի պահանջներին,

գ. Կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի դ. պարբերությամբ նախատեսված դեպքերում՝ համապատասխանում է ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամաններով սահմանված կարգի պահանջներին,

5) հրամանատարի (պետի) կողմից դրական որոշում կայացվելու դեպքում.

ա. Կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի ա. պարբերությամբ նախատեսված դեպքերում զորամասում (զինվորական կառավարման մարմնում) տասնօրյա ժամկետում նախապատրաստվում է զինծառայողի անձնական գործի երկրորդ օրինակը: Անձնական գործերը, ատեստավորման հանձնաժողովի արձանագրությունը և զեկուցագիրը՝ ըստ վերադասության համապատասխան պետերի միջնորդություններով ուղարկվում են պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչություն,

բ. Կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի բ. պարբերությամբ նախատեսված դեպքերում զորամասում (զինվորական կառավարման մարմնում) տասնօրյա ժամկետում նախապատրաստվում են զինծառայողի անձնական գործերը (սպայական կազմի համար՝ երկրորդ օրինակը, շարքային կազմի համար՝ երկու օրինակ) և ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան՝ զինվորական պաշտոնի նշանակելու միջնորդագիր: Անձնական գործերը, ատեստավորման հանձնաժողովի արձանագրությունը, միջնորդագիրը և զեկուցագիրը՝ ըստ վերադասության համապատասխան պետերի միջնորդություններով ուղարկվում են պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչություն,

գ. Կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի գ. պարբերությամբ նախատեսված դեպքերում զորամասում (զինվորական կառավարման մարմնում) տասնօրյա ժամկետում նախապատրաստվում են զինծառայողի անձնական գործերը (սպայական կազմի համար՝ երկրորդ օրինակը, շարքային կազմի համար՝ երկու օրինակ): Անձնական գործերը, զեկուցագիրը և ատեստավորման հանձնաժողովի արձանագրությունը՝ ՀՀ զինված ուժերում զինծառայողի ունակություններին համապատասխան պաշտոնում պայմանագրային զինվորական ծառայության անցնելու առաջարկով և ըստ վերադասության համապատասխան պետերի միջնորդություններով ուղարկվում են պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչություն,

դ. Կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի դ. պարբերությամբ նախատեսված դեպ-քերում սպայական կամ սերժանտական դասընթացներում ընդգրկելու միջնորդությունը ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամաններով սահմանված կար-գով և ժամկետներում ուղարկվում է ՀՀ ԶՈՒ ԳՇ կադրերի վարչություն,

6) ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով սահմանված՝ զինվորական պաշտոնների նշանակման կարգով նախատեսված ընթացակարգերի պա-

հանջներին համապատասխան նյութերն ուսումնասիրվում և զինվորական պաշտոնի նշանակման հրամանի նախագծի (ձև 2-4) հետ ներկայացվում են պաշտոնի նշանակման իրավասություն ունեցող պաշտոնատար անձին,

7) շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին ծառայության ընթացքում պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու վերաբերյալ հրամաններն առաքվում են նաև ՀՀ ԶՈՒ ԳՇ կազմզորահավաքային վարչություն և ՀՀ զինվորական կոմիսարիատ:

(2-րդ կետը լրաց. 22.10.18 ՀՀ ՊՆ հր. 1202-Լ)

3. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, ինչպես նաև 32-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության հետ քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած, ինչպես նաև ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցած շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված անձանց հետ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքվում է սահմանված կարգով զինվորական երդում տալու օրվանից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրում նախատեսված պայմաններով:

(3-րդ կետը լրաց. 22.10.18 ՀՀ ՊՆ հր. 1202-Լ)

4. Մինչև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում (այսուհետև՝ ԵՊԲՀ) ուսումնառության ընթացքում ռազմական պատրաստություն անցած, ուսումնառությունը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ավարտած և շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված զինծառայողի կողմից սպայական կազմի համապատասխան ռազմաբժշկական մասնագիտական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնելու դեպքում նրա հետ կնքվում է քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր՝ ԵՊԲՀ ինտերնատուրայում 1 տարի ժամկետով ուսումնառության գործուղելու մասին (համաձայն ձև 5-ի)՝ պայմանագրում պարտադիր նախատեսելով սահմանված կարգով

ուսումնառության ավարտից հետո սպայական կազմի պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պարտավորությունը:

(4-րդ կետը լրաց. 22.10.18 ՀՀ ՊՆ հր. 1202-Լ)

5. Կարգի 4-րդ կետում նշված զինծառայողների վրա ինտերնատուրայում ուսումնառության ընթացքում տարածվում են ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետն ավարտած ու ինտերնատուրայում հրամանագրված կուրսանտների համար «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով ու այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված երաշխիքները:

(5-րդ կետը լրաց. 22.10.18 ՀՀ ՊՆ հր. 1202-Լ)

6. Կարգի 4-րդ կետում նշված անձինք սպայական կազմի համապատասխան ռազմաբժշկական մասնագիտական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացնում են շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելիս՝ հանրապետական հավաքակայանում, որի հիման վրա չեն մասնակցում ծառայության վայրեր նշանակման վիճակահանությանը, հանրապետական հավաքակայանում նրանց հետ կնքվում է քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիրը և վերջիններս ուղարկվում են ռազմաբժշկական ֆակուլտետի տրամադրության տակ, իսկ զինվորական երդում տալուց հետո հրամանագրվում են ինտերնատուրայում:

(6-րդ կետը լրաց. 22.10.18 ՀՀ ՊՆ հր. 1202-Լ)

Ձև 1

ՀՀ ՊՆ _____ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

_____-ին

նույն զորամասի _____

զբաղեցրած պաշտոնը

_____

_____ից

կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

Ես՝ _____-ս,

կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը

_____ թ. զորակոչվել եմ պարտադիր զինվորական ծառայության:

Ցանկություն ունեմ պայմանագրային զինվորական ծառայության անցնելու ՀՀ զինված ուժերում:

Խնդրում եմ Ձեր միջնորդությունը վերադաս հրամանատարությանը՝ _____

_____

իր զբաղեցրած կամ նախընտրելի պաշտոնը

պաշտոնում պայմանագրային զինվորական ծառայության անցնելու համար:

ՀՀ ՊՆ _____ԶՈՐԱՄԱՍԻ_____

զբաղեցրած պաշտոնը

_____

կոչումը, տորագրությունը, Ա.Հ.Ա.

« »_____2018թ.

Ձև 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _____20 թ. ք.Երևան

ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (առաջին պայմանագրի կնքմամբ պայմանագրային զինվորական ծառայության ներգրավում)՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի բժշկական կետի բժիշկ (10), բ.ծ. լեյտենանտ Կարեն Սերոբի Ավետիսյանին իր ցանկությամբ **ներգրավել** պայմանագրային զինվորական ծառայության՝ նրա հետ կնքելով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին երեք տարի ժամկետով առաջին պայմանագիր:

Զինվորական ծառայության օրացուցային ստաժը 02.02.2018թ. դրությամբ կազմում է՝ 01 տարի, 02 ամիս, 10 օր:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ձև 3*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _____20 թ. ք.Երևան

ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԵՎ ԲԱՐՁՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (առաջին պայմանագրի կնքմամբ պայմանագրային զինվորական ծառայության ներգրավում՝ ծառայության մեջ առաջխաղացման կարգով)

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի բժշկական կետի բժիշկ, բ.ծ. լեյտենանտ Կարեն Սերոբի Ավետիսյանին **ներգրավել** պայմանագրային զինվորական ծառայության՝ նրա հետ կնքելով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին երեք տարի ժամկետով առաջին պայմանագիր:

2. Բ.ծ. լեյտենանտ Կ. Ավետիսյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի բժշկական կետի պետ (16), ազատելով ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի բժշկական կետի բժշկի (10) պաշտոնից:

Զինվորական ծառայության օրացուցային ստաժը 02.11.2018թ. դրությամբ կազմում է՝ 01 տարի, 11 ամիս, 10 օր:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

* Հրամանի ձևաչափը վերաբերում է բարձր կամ հավասար կամ ցածր պաշտոնի նշանակմանը՝ համապատասխան հոդվածի կիրառմամբ:

Ձև 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _____20 թ. ք.Երևան

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ, ՍՊԱՅԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (առաջին պայմանագրի կնքմամբ պայմանագրային զինվորական ծառայության ներգրավում՝ ծառայության մեջ առաջխաղացման կարգով)՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի ավագ հրաձիգ, սերժանտ Արմեն Սերոբի Պողոսյանին **ներգրավել** պայմանագրային զինվորական ծառայության՝ նրա հետ կնքելով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին երեք տարի ժամկետով առաջին պայմանագիր:

2. Սերժանտ Ա.Պողոսյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի ավագ ինժեներ (10), ազատելով ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի ավագ հրաձիգի պաշտոնից:

3. ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի ավագ ինժեներ, սերժանտ Ա.Պողոսյանին **շնորհել** առաջին սպայական «**լեյտենանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով ՀՀ զինված ուժերի սպայական կազմ:

Զինվորական ծառայության օրացուցային ստաժը 02.11.2018թ. դրությամբ կազմում է՝ 01 տարի, 11 ամիս, 10 օր:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ձև 5

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԵՐՈՎ ԻՆՏԵՐՆԱՏՈՒՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«___»_____20 թ. գ. Երևան

1. Ընդհանուր դրույթներ

1. Մի կողմից՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, այսուհետև՝ Նախարարություն, ի դեմս՝_____
(պաշտոնատար անձի պաշտոնը, զինկոչումը,
_____
անունը, ազգանունը և հայրանունը)
և զինծառայող՝_____
(կոչումը, անունը, հայրանունը և ազգանունը)
(այսուհետև՝ Զինծառայող), կնքեցին սույն պայմանագիրն այն մասին, որ Զինծառայողը գործուղվում է ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով ուսումնառություն անցնելու_____
(ԲՈՒՀ-ի անվանումը)
_____- ի ինտերնատուրայում (այսուհետև՝ ԲՈՒՀ):

2. Կողմերը պայմանավորվում են, որ սույն պայմանագրի հիման վրա ԲՈՒՀ-ի ինտերնատուրայի ավարտական քննություններն ու ստուգարքները հանձնելու դեպքում Զինծառայողը Նախարարության հետ կնքում է պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու առաջին պայմանագիր՝ 2 տարի ժամկետով:

3. Կողմերը պայմանավորվում են, որ Զինծառայողն իր նախաձեռնությամբ ուսումնառությունից հրաժարվելու, կամ անկարգապահության կամ անբավարար առաջադիմության համար ուսումնառությունից հեռացվելու, ինչպես նաև ուսումնառությունն ավարտելուց հետո Նախարարության հետ սույն պայմանագրի 2-րդ կետով նախատեսված կարգով հետուսումնական պայմանագրային ծառայություն անցնելու առաջին պայմանագիր չկնքելու կամ հետուսումնական 2 տարվա ընթացքում պայմանագրային զինվորական ծառայություն անցնելուց հրաժարվելու դեպքերում Զինծառայողի համար ծագում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգա-

վիճակի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 15-րդ հոդվածի 12-րդ մասով և 54-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավական հետևանքները:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

4. Զինծառայողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն պայմանագրի հիման վրա իրավունք ունի՝

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ ուսումնառության գործուղվողի համար նախատեսված կոմունալ-կենցաղային բավարար պայմաններ, զինվորական հանդերձանք, սնունդ, անվճար բուժսպասարկում և օրենքով սահմանված դրամական ապահովություն,

2) ԲՈՒՀ-ի ինտերնատուրան ավարտելուց հետո Նախարարությունից պահանջելու իր հետ կնքել հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու առաջին պայմանագիր և նշանակվել իր ստացած մասնագիտությանն ու որակավորմանը համապատասխանող պաշտոնի, շնորհել սպայական կոչում,

3) օգտվել օրենսդրությամբ ԲՈՒՀ-ում սովորողների համար նախատեսված իրավունքներից:

5. Զինծառայողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն պայմանագրի հիման վրա պարտավոր է՝

1) Հաստատված ծրագրի համաձայն մասնակցել ԲՈՒՀ-ում ուսումնառությանը,

2) ԲՈՒՀ-ի ինտերնատուրայի ավարտական քննություններն ու ստուգարքները հանձնելուց հետո Նախարարության հետ կնքել հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու առաջին պայմանագիր՝ 2 տարի ժամկետով:

6. Նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն պայմանագրի հիման վրա իրավունք ունի՝

1) Զինծառայողից պահանջել հաստատված ծրագրի համաձայն մասնակցել ուսումնառությանը, ինչպես նաև սույն պայմանագրով նախատեսված ժամկետում անցնել պայմանագրային զինվորական ծառայություն,

2) Զինծառայողի նկատմամբ կիրառել օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ, վաղաժամկետ դադարեցնել սույն պայմանագիրը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով,

3) սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված դեպքերում կիրառել սույն պայմանագրի 9-րդ կետում նախատեսված իրավական հետևանքները:

7. Նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն պայմանագրի հիման վրա պարտավոր է՝

1) ապահովել ինտերնատուրայում Զինծառայողի անվճար ուսումնառությունը,

2) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուսումնառության ընթացքում Զինծառայողին ապահովել անհրաժեշտ կոմունալ-կենցաղային պայմաններով, զինվորական հանդերձանքով, սննդով, անվճար բուժսպասարկմամբ և օրենքներով ու այլ իրավական ակտերով սահմանված դրամական ապահովությամբ ու սոցիալական երաշխիքներով,

3) ուսումնառությունն ավարտելուց հետո սույն պայմանագրի 2-րդ կետով նախատեսված կարգով Զինծառայողի հետ կնքել հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու առաջին պայմանագիր և նրան նշանակել ստացած մասնագիտությանն ու որակավորմանը համապատասխանող պաշտոնի, շնորհել սպայական կոչում,

4) իրականացնել Զինծառայողի՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով նախատեսված, ինչպես նաև ծառայության առանձնահատկություններից բխող իրավունքների ապահովումը:

3. Կողմերի պատասխանատվությունը

8. Նախարարության կողմից սույն պայմանագրի 7-րդ կետով նախատեսված պարտավորությունները պարբերաբար խախտելու դեպքում Զինծառայողն իրավունք ունի հիմնավորված դիմում ներկայացնել ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչության պետին և առաջ քաշել պայմանագրի գործողությունը դադարեցնելու հարցը:

9. Սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված դեպքերում Զինծառայողի համար ծագում են օրենքով սահմանված հետևյալ իրավական հետևանքները.

1) Զինծառայողը զրկվում է սպայական կոչումից և ուղարկվում է շարունակելու օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը,

2) ինտերնատուրայում ուսումնառության և/կամ հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում մինչև համապատասխան պայմանագրի դադարեցման օրն ընկած զինվորական ծառայության ժամկետը չի հաշվարկվում օրեն-

քով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ժամկետում, ինչպես նաև Զինծառայողը ԲՈՒՀ-ին վճարում է ինտերնատուրայում ուսումնառության վճարովի համակարգում ուսման վարձի գումարի կրկնապատիկը:

4. Վեճերի լուծումը և պայմանագրի գործողության ժամկետը

10. Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ, ինչպես նաև ըստ վերադասության կամ դատական կարգով:

11. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելուց հետո՝ զինծառայողին ինտերնատուրայում հրամանագրելու օրվանից, որի մասին հայտարարվում է ՀՀ պաշտպանության նախարարի _____

(հրամանի օրը, ամիսը, տարին, համարը)

հրամանով: Սույն պայմանագիրը գործում է մինչև հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու առաջին պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը:

12. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ, մեկը տրվում է Զինծառայողին, իսկ մյուսը՝ կարվում Զինծառայողի անձնական գործում:

5.Կողմերի վավերապայմանները

ԶԻՆԾԱՌԱՅՈՂ	ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
_____	_____
(զինկոչումը)	(պաշտոնատար անձի զինկոչումը)
_____	_____
(անվան ու հայրանվան սկզբնատառերը, ազգանունը)	(անվան ու հայրանվան սկզբնատառերը, ազգանունը)
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
	Կ.Տ.
«___»_____20 թ.	«___»_____20 թ.

(5-րդ ձևը լրաց. 22.10.18 ՀՀ ՊՆ հր. 1202-Լ)